## Մամլոյ Հաղորդագրութիւն

Գրեթէ տասը օր է ի վեր մեր ժողովուրդը Հալէպի մէջ կ՛ապրի առանց ջուրի, «Նուսրա» ճակատը և այլ ընդդիմադիր զինեալ խմբակցութիւնները իրենց վերհսկողութեան տակ առնելու պատճառով խմելու ջուրի կառավարական հաստատութիւնը և ջրամատակարարումը դադրեցնելէ ետք ջուրի օդաhիւսքին մէջ: Այս պատճառեց աղիտալի հետեւանքներ մարկանց կեանքին և հանրային առողջութեան վրայ, քաղաքին և անոր շրջակայքին մէջ: Մենք, Ազգային Համակարգող Մարմնին մէջ, կը դատապարտենք այս վարկաբեկ արարքները կատարուած «Նուսրա» ճակատին և այլ ծայրայեղ զինեալ խմֆակցութիւններուն կողմէ, և կը պահանջենք ջուրի կրկին մատակարարումը Հալէպի մեր ժողուվուրդին տուներուն, և այս առումով, պէտք է Սուրիական Կարմիր Մահիկը և Միջազգային Կարմիր Խաչը միջամտեն օգնութեան այս հարցին շուրջ: Մինչեւ որ իրագործուի այս հարցը, պէտք է նկատեալ կառավարական մարմինները աշխատիլ ապահովելու ջուրերը ժամանակաւոր ձեւով այլ աղբիւրներէ: Քաղաքացիներուն կեանքը պահպանելը պէտք է գերագոյն արժէք ըլլայ, և պէտք չէ չաչարար գործածել հանրային ծառայութիւնները, որուն վրայ կը հիմնուի այս կեանքը, ինչպէս սննդային ապրանքներու, ջուրի, ելեկտրականութեան, ջրաքամի մատակարարումը և այլն:Եւ կը յիշեցնենք թէ ջրամատակարարումի անջատումը զինեալ հակամարտութեան պարագաներուն կը համարուի պատերազմի ոճրագործութիւն, ըստ Ժընեւի համաձայնութեան երկրորդ լրացուցիչ արձանագրութեան 1977-ին:

Սուրիացիները կեանքի արժանի են, և ոչ թէ մահի

Ազգային Համակարգող Մարմնի տեղեկատուական գրասենեակ

12/05/2014